Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկութեան և կենսական շահերին, ինչպիսի համախոսականներ և դրաւոր իմպերատիւ մանդատներ տուել է նա իւր ընտրած պատգամաւորներին։

Համագումարը անընդունելի է համարում Ազրբէջանի հետ առընչութիւն ունեցող որև է վարչական ծրագիր և այդ ծրագրի բռնի իրականացումը կեանքի մէջ համարում է անխուսափելի պատճառ՝ ստեղծելու ազգամիջեան լուրջ խռովութիւններ ու արիւնհեղութիւններ, որի պատասխանատուութիւնը իր վրա վերցնել ո՛չ մի դէպքում չի կարող Ղարաբաղի հայութեան 5րդ համագումարը»։

Այս բանաձևը դիւանի ամբողջ կազմի և 48 պատգամաւորների ստորագրութեամբ յանձնուեց Շատելվորտին, որը ղժգոհ ու դայրացած վերադարձաւ Բագու։ Դրանից յետոյ, դր. Սուլթանովը, անգլիացիների օժանդակութեամբ սկսեց զօրքեր և զինուորական պատրաստութիւններ տեսնել, որպէսզի բռնի ուժով հնազանդեցնի ղարաբաղցիներին։ Մայիսի վերջերից ազրբէջանեան զօրքերը շրջապատում էին քաղաքը և ամուր դիրքեր գրաւում։

Յունիս 3-ին մայոր Մաք Մեղենը իր մօտ կանչեց Ազգ. Խորհրդի նախագահ՝ Եղիշէ Իշխանեանին և անդամներ Յ. Թումեանին և Ա. Տէր-Աստուածատրեանին և ուրիշներին—7 հոգի—և ստորագրութիւն առաւ, որ այդ օրուանից այլևս քաղաքականութեամբ չպիտի զբաղուեն։ Նոյն օրը ազրբէջանեան զօրքերը դիրքեր գրաւեցին հայկական թաղում։ Հայերի մէջ սկսուեց խուճապ։ Փակուեցին խանութներն ու արհեստանոցները և հաւաքուեցին անգլիական ներկայացուցչութեան առջև՝ պահանջելով ձեռք առնել շտապ միջոցներ, որպէսզի տեղի չունենայ արիւնհեղութիւն։ Մաք Մեղենը վստահացրեց, թէ ոչինչ չի պատահի, բայց նոյն ժամին տեղեկութիւն ստացուեց, որ դր. Սուլթանովը պահանջում է իրեն յանձնել վերոյիշեալ 7 գործիչներին՝ սպառնալով, հակառակ դէպքում, քաղաքը ռմբակոծել թնդանօթներից։ Մաք Մեղենի խորհրդով, 7 գործիչները հեռացան քաղաքից, անգլիական զինուորների հսկողութեան տակ։ Սուլթանովի ուզածն էլ այդ էր։

Յաջորդ օր, յունիս 4-ին, թրքական թաղից սկսուեց հրացանաձգութիւն ու յարձակում հայերի վրա։ Քաղաքում գտնուող հայ ինքնապաշտպանողական խմբերը դիմեցին հակայարձակման և գրաւեցին հայկական դիրքերը, որ մի օր առաջ բռնել էին թուրքերը։ Ամբողջ օր տեւեց հրացանաձգութիւնը, և քաղաքի հայ բնակչութիւնը ապրեց տագնապալի ժամեր։ Տեսնելով, որ ընդհարումը կարող է խորանալ, Մաք Մեղենը հրամայեց թուրքերին և հայերին վերջ տալ հրացանաձգութեան և մաքրել դիրքերը. հայերը հնազանդուեցին, և նրանց դիրքերը գրաւեցին անգլիական զինուորները. թուրքերը դուրս չեկան իրենց դիրքերից։ Թուրքերի գնդակով սպանուեց անգլիական մի զինուոր և վիրաւորուեց մէկ ուրիշը։

Յունիս 5-ին, անգլիական ներկայացուցչութեան և ազրբէջանեան հրամանատարութեան աչքի առջև, թուրք ու քիւրդ զինուած խուժանը կոտորեց Շուշիից 2 վերստ հեռու գտնուող Ղայբալիքենդ հայկական մեծ գիւղը։ Անլուր բռնութիւններ գործուեցին անպաշտպան կանանց ու երեխա-